

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СООБЩЕНИЯ

ԱԿԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆ

(Ակադեմիկոս Հովսեփ Օրբելու ծննդյան 75-ամյակի առթիվ)

Պրոֆ. Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Սուր և խորաթափանց միտք, բազմահարուստ և խոր գիտելիքներ, անսպառ եռանդ, կրակոտ ու հախուռն խառնվածք, հոգևորի վարպետություն, անմիջականություն, փոթորկող հույշեր ու բռնկումներ՝ զործողության մշտական եռուզեռի հորձանքում—ահա թե ինչն էր բնութագրական Հովսեփ Օրբելուն:

Օրբելին ծնվել է 1887 թ. մարտի 8-ին (հին տոմարով) Քութախիում բնակվող հայ բնտանիքում: Ավարտելով դասական գիմնազիան Թբիլիսիում, նա 1904 թ. մտնում է Պետերբուրգի համալսարանը և ուսանում դասական բաժանմունքի պատմա-բանասիրական ֆակուլտետում: Սակայն երիտասարդ Հ. Օրբելուն ավելի հետաքրքրում էր արևելագիտությունը, մանավանդ Կովկասի և Մերձավոր Արևելքի կուլտուրայի պատմությունն ու բանասիրությունը, որոնք այդ ժամանակ ծաղկում էին ուսական գիտության և մշակույթի խոշորագույն կենտրոն Պետերբուրգում, ունենալով այնպիսի ականավոր ներկայացուցիչներ, որպիսիք էին Վ. Վ. Բարտոլդը, Վ. Դ. Ժուկովսկին, Կ. Գ. Զալեմանը, Ն. Յա. Մառը, Յա. Ի. Սմիրնովը, Ֆ. Ի. Սլոդենբուրգը և ուրիշներ:

Զղտելով խորանալ կովկասագիտության և արևելագիտության մեջ, Պետերբուրգի համալսարանի դասական բաժանմունքի ուսանող Հ. Օրբելին 1907 թ. սկսում է հաճախել նաև համալսարանի Արևելյան լեզուների հայ-վրացական-պարսկական բաժինը: Ռուսական կովկասագիտության դպրոցը, որի գլուխ կանգնած էր Ն. Յա. Մառը, ընդգրկում էր Կովկասի պատմությունն ու հնագիտությունը, լեզուներն ու գրականությունը մշակույթն ու արվեստը: Հ. Օրբելին ներգրավվում է այդ դպրոցի մեջ:

Հ. Օրբելու՝ իբրև գիտնականի ձևավորման գործում բացառիկ նշանակություն ունեցան Անիի պեղումները, որոնք դարձան նրա երկրորդ համալսարանը, սկսած 1906 թ. և՛ որպիսի եռանդ ու անձնուրացություն էին ցուցաբերում Ն. Մառը և նրա աշխատակիցները Անին, միջնադարյան Հայաստանի այդ նշանավոր մայրաքաղաքը, հայ մշակույթի և արվեստի այդ անդուգական դանձարանը ուսումնասիրելիս: Այստեղ, Անիում էլ զրսևորվում են երիտասարդ գիտնական Հովսեփ Օրբելու գիտական կորովն ու ձիրքերը և դեռևս ուսանող՝ նա դառնում է գիտնական:

1909 թ., մինչև կրկին Անի մեկնելը, Հ. Օրբելին Պետերբուրգի համալսարանի Արևելյան լեզուների ֆակուլտետի կողմից գործուղվում է Նաչիկ, հնագիտական հետազոտություններ կատարելու: Այստեղ նա հավաքում է էպիգրաֆիկ նյութեր, հետազոտում է Գանձասարի վանքը, ուսումնասիրում խաչքարերի վրա հանդիպող կենցաղային քանդակները:

1909 և 1910 թթ. Ն. Մառը, զբաղված լինելով Գառնիի հեթանոսական տաճարի պեղումներով, Օրբելուն էր հանձնարարել Անիում տարվող աշխատանքների ղեկավարությունը: Անիում Օրբելին դառնում է նոր կազմակերպված թանգարանի վարիչը, ուսումնասիրում է հնագիտական նյութերը և հրատարակության պատրաստում մի շարք ուսումնասիրություններ՝ կապված Անիի պեղումների հետ: Անիում և նրա շրջակայքում նա խոշոր աշխատանք է կատարում հայերեն վիմական արձանագրությունների հավաքման ու մշակման ուղղությամբ:

Երիտասարդ գիտնականի աշխատությունները, ներդաշնակելով իր ուսուցիչ Մառի գիտական ուղղության և գործունեության հետ՝ լուսաբանում են մշակույթի պատմության հարցերը, քննության առարկա ունենալով առավելապես Անիի նյութերը: 1909—1911 թթ. մեկը մյուսի ետևից երևան են գալիս նրա աշխատությունները Երոկհատուղի և Սֆրոնի հրատարակած Նոր հանրագիտական բառարանում: Այդ աշխատություններում հեղինակը զրսևորում է գիտնականի իր բազ-

մակողմանի շնորհքն ու թափը և հաստատուն տեղ զբաղում կովկասագիտության, արևելագիտության մեջ: Օրբելին արդեն ճանաչված գիտնական էր և 1911 թ. նրան գիտական նպատակով զործուղում են Արևմտյան Հայաստան, ուր նա մի տարի շարունակ ուսումնասիրում է Վանի և նրա շրջակայքի ուրարտական հուշարձանները, էրզրումի, Հին Բայազետի և Վանի վիլայեթների հայկական ու մահմեդական ճարտարապետական կոթողները: Նա հավաքում է նաև զգալի չափով էպիգրաֆիկ նյութեր: Սակայն Օրբելուն հետաքրքրող հարցերը հնագիտական հետազոտություններով չէին սահմանափակվում: Այս զործուղման ընթացքում նա ուսումնասիրում է հայկական տեղական բարբառները (Մոկաց բարբառը) և քրդերեն լեզուն:

1913 թ., երբ Ն. Մառը ուղևորություն էր կատարում Սփաննթիայում, նորից Հ. Օրբելին էր ղրկավորում Անիում տարվող աշխատանքը: Նույն թվականին վերադառնալով Պետերբուրգ և հանձնելով մագիստրոսական քննությունները Արևելյան լեզուների ֆակուլտետի հայ-վրացական ամբիոնի ղեկավար Հ. Օրբելին 1914 թ. ստանձնում է Պետերբուրգի համալսարանի պրիվատ-դոցենտի պաշտոնը և սկսում դասախոսություններ կարդալ հայոց պատմության, հնագիտության ու էպիգրաֆիկայի վերաբերյալ: Դեռևս երիտասարդ հասակում Օրբելին հանդես է եկել որպես գիտական հետաքրքրության մեծ շրջանակներ ունեցող գիտնական ու միանգամայն հասկանալի է, թե ինչու նրան են հանձնարարում զբեկու ուրվագծեր ոչ միայն հայկական, այլև վրացական մուսուլմանական արվեստի պատմության վերաբերյալ:

1916 թ. ամռանը Ռուսական հնագիտական ընկերությունը արշավախումբ ուղարկեց Վան: Արշավախմբի պետ նշանակված էր Ն. Մառը, իսկ նրա օգնականը Հ. Օրբելին էր: Չնայած աշխատանքները կատարվում էին պատերազմի ծանր պայմաններում, սակայն նրանց արդյունքները փայլուն եղան: Առանձնապես մեծ էր Օրբելուն բաժին ընկած հաջողությունը: Պեղելով Վանա բերդը, նա բաց արեց ուրարտական Սարգուրի II թագավորի ընդարձակ տարեգրությունը, որը խոշոր նշանակություն ունեցավ ուրարտագիտության համար:

1917 թ. ամառը Հ. Օրբելին Անիում և Դիլիջանի շրջանում շարունակում է էպիգրաֆիկ նյութեր հավաքել, նպատակ դնելով հրատարակել հայկական վիմական արձանագրությունների կորպուսը: Վերադառնալով Պետրոգրադ, սեպտեմբերին նա ընտրվում է դոցենտ:

Հ. Օրբելին պատկանում էր գիտության առաջավոր ներկայացուցիչների թվին և երբ բորենկվեց Մեծ Հոկտեմբերը, նա իր ուսուցիչների հետ միասին անվերապահորեն ընթացավ նոր բացված ուղիով և զործուն մասնակցություն ունեցավ սովետական երիտասարդ ռեսպուբլիկայի կուլտուրական շինարարությանը:

1918 թ. հունիսին նա ստանձնում է Պետրոգրադի հնագիտական ինստիտուտի արևելյան միջնադարի հնագիտության ամբիոնի ասիստենտի պաշտոնը՝ իր ուսուցիչ Յա. Ի. Սմիրնովի մոտ, և շուտով դառնում է նույն ինստիտուտի դասախոս: 1918 թ. հոկտեմբերին, երբ Մոսկվայում լուսավորության ժողովրդական կոմիսարի հրամանով վերակառուցվում էր Հաղարյան ինստիտուտը, Օրբելին հրավիրվում է այնտեղ՝ Առաջավոր Արևելքի պատմության պրոֆեսորի պաշտոնով և որպես ինստիտուտի վարչության անդամ զործուն մասնակցություն է ունենում նրա վերակառուցման աշխատանքին: Նույն 1918 թ. հոկտեմբերին նա ընտրվում է պետական Հնագիտական հանձնաժողովի խորհրդի անդամ, և մասնակցում այդ Հանձնաժողովը Ռուսական նյութական կուլտուրայի ակադեմիայի վերակազմելու աշխատանքներին: Նա ընտրվում է նաև Մոսկվայի հնագիտական ընկերության իսկական անդամ:

1919 թ. օգոստոսին Հ. Օրբելին ընտրվում է Ռուսական նյութական կուլտուրայի պատմության ակադեմիայի անդամ և ղեկավարում է հայ-վրացական հնագիտության և արվեստի ենթաբաժինները: Ստանձնելով նույն Ակադեմիայի գիտական քարտուղարի պաշտոնը, նա խոշոր մասնակցություն է ցուցաբերում Ակադեմիայի կազմակերպման ղեկավարման աշխատանքներին:

1920 թ. մայիսին Օրբելին, որպես տպագրության զործին հմուտ մարդ՝ ընտրվում է նույն Ակադեմիայի հրատարակչության պետ և հրատարակությունների խմբագիր: Նա ընդարձակում է Ռուսական նյութական կուլտուրայի պատմության ակադեմիայի տպարանը, օգնում է նաև ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիային՝ ստեղծելու իր տպագրական բազան: Նա մասնակցություն է ունեցել այլևայլ գիտական հանձնաժողովների, խորհուրդների և հիմնարկների վարչությունների աշխատանքներին, ամենուրեք ցուցաբերելով մեծ եռանդ և կազմակերպչական շնորհք:

2 Վրացական և մուսուլմանական արվեստի վերաբերյալ հոդվածները նույնպես լույս են տեսել Բրոկհաուզի և Եֆրոնի հրատարակած Նոր հանրագիտական բառարանում, 1913—1915 թթ.:

Օրբելու գիտա-կազմակերպչական գործունեության մեջ մի նշանավոր բաժին է կազմում նրա աշխատանքը Պետական էրմիտաժում, որին նա նվիրեց իր գործունեության կեսից ավելին: 1919 թ. օգոստոսից կապվելով Պետական էրմիտաժի հետ, նա 1920 թ. հոկտեմբերին ընտրվում է այդ թանգարանի մուսուլմանական արվեստի բաժանմունքի վարիչ: Շուտով նա այդ բաժանմունքը վերակազմում է, դարձնելով Կովկասի, Իրանի, Միջին Ասիայի և մուսուլմանական Արև-վելքի երկրների բաժանմունք: Շնորհիվ ղեկավարի եռանդուն ջանքերի ու կազմակերպչական մեծ ձիրքի, մի քանի տարիների ընթացքում այդ բաժանմունքը այնքան է հարստանում և ընդարձակվում, որ 1926 թ. Օրբելու նախագծով վերակազմվում է, դառնալով Արևելքի բաժին:

1934 թ. մինչև 1951 թ. Հ. Օրբելին վարել է Պետական էրմիտաժի գիրեկտորի պաշտոնը: Երբ սկսվեց Հայրենական պատերազմը ակադեմիկոս Օրբելին մնաց Լենինգրադում և ղխավորեց Պետական էրմիտաժի և ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Լենինգրադում գտնվող հիմնարկների թանգարանային և դրադարանային արժեքների պահպանության և ապահով վայրեր փոխադրելու գործը, որը նա ղուխ բերեց մեծ կորոզով ու հմտությամբ:

Առանձին երախտագիտության ևն արժանի ակադեմիկոս Հ. Օրբելու ծառայությունները Սովետական Հայաստանի գիտության բարգավաճման գործում: Նա Հայաստանի և հայ ժողովրդի հետ սերտորեն կապված է ոչ միայն իր ծագումով, գիտական հետազոտություններով, որոնք նա կատարել է Անիում, Արևմտյան Հայաստանում և Հայաստանի ուրիշ վայրերում, այլև գիտա-կազմակերպչական ընդարձակ գործունեության ծավալմամբ: 1929 թ. Հ. Օրբելին Հայաստան է ղալիս նպատակ ունենալով ստեղծելու սերտ կապ Պետական էրմիտաժի և Հայաստանի գիտական հաստատությունների միջև, ձեռնարկելու համատեղ գիտա-հետազոտական աշխատանքներ՝ պեղումներ, էպիգրաֆիկ նյութերի հավաքում, և միացյալ ուժերով կազմակերպելու հայկական վիճակաճարձանագրությունների «կորպուս»-ի հրատարակությունը: Հայաստանում գտնված ժամանակամիջոցում նա ուսումնասիրում է Գառնիի, Պտղնիի, Աշտարակի, Փարպիի և այլ վայրերի ճարտարապետական հուշարձանները: Նույն 1929 թ. էլ նա ընտրվում է Հայաստանի պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի կազմում, իսկ 1933 թ. վերջին Հայաստանի Կուլտուրայի պատմության ինստիտուտի իսկական անդամ: 1936 թ. Հ. Օրբելուն նորից տեսնում ենք Հայաստանում, երբ նա Պետական էրմիտաժի և Հայաստանի պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի գիտական աշխատողների կոլեկտիվի ղուխն անցած պեղումներ է կատարում Անիում:

1938 թ. ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը ակադեմիկոս Օրբելուն ընտրում է Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի (ԱՐՄՖԱՆ) նախագահ: Նույն թվականի վերջին նա Հայաստան է ղալիս՝ ինչպես իր պաշտոնը վարելու, նույնպես և «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպի համահավաք տեքստի մշակումը ղեկավարելու նպատակով:

1939 թ. ակադեմիկոս Օրբելին որպես «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպի 1000-ամյակի տոնակատարության ռեսպուբլիկական կազմակերպչական կոմիտեի նախագահի տեղակալ և Գրողների միության հոբելյանական կոմիտեի անդամ՝ ղեկավարում է այդ հոբելյանի նախապատրաստումն ու տոնակատարությունը:

1943 թ., երբ պատերազմի պայմաններում ծնունդ առավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան, Օրբելին ընտրվեց նրա առաջին պրեզիդենտը: Իբրև Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտ, Հ. Օրբելին խոշոր դեր է խաղացել Ակադեմիայի գիտական հաստատությունների կազմակերպման, կադրերի ընտրության, հիմնական գիտական ուղղությունների և խնդիրների որոշման ու իրականացման գործում: Հ. Օրբելու ծառայությունը Հայաստանի նորակազմ Ակադեմիայի ստեղծման և գիտական աճի ու ամրապնդման գործում արժանի է ամենայն երախտագիտության:

1947 թ. փետրվարի 16-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը հարգելով ակադեմիկոս Օրբելու ղիմումը՝ Պետական էրմիտաժի աշխատանքներով ծանրաբեռնված լինելու պատճառով նրա թեկնածությունը Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտի նոր ընտրությունների ժամանակ քվեարկության չղրեց և հայտնեց իր խորին երախտագիտությունն ու շնորհակալությունը նրան՝ բարձր գնահատելով իր առաջին պրեզիդենտի խոշոր ծառայությունները ակադեմիայի կազմակերպման ու ղեկավարման գործում: Հ. Օրբելին խոշոր աշխատանք է տարել կադրերի պատրաստման գծով: Նա իր կյանքի վերջին տարիներին վարում էր ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի վարիչի պաշտոնը:

Հ. Օրբելու գիտական աշխատությունների թիվը հասնում է 80-ի, դրանցից 68-ը հրատարակված են: Նրա բազմաբովանդակ աշխատությունները կարելի է բաժանել երեք խմբի, որոնք

րնդդրկում են՝ ա) Նյութական կուլտուրայի և արվեստի պատմությունը: ր) Հայերեն վիժական արձանագրությունների հավաքումն ու հրատարակությունը: գ) Գրականության պատմությունը և ժողովրդական բանահյուսությանն ու լեզվին վերաբերող հարցերը:

Հ. Օրբելու աշխատությունների հիմնական մասը (քանակով համարյա կեսը՝ 36 անուն) նվիրված է Հայաստանի, Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի նյութական կուլտուրայի և արվեստի պատմությանը: Գրանցից մի քանիսը ամփոփում են Անիի հնագիտական պեղումների արդյունքները և խոշոր արժեք են ներկայացնում ոչ միայն Հայաստանի, այլև Մերձավոր Արևելքի միջնադարյան քաղաքի տնտեսության, արհեստագործության, առևտրական կապերի և քաղաքային բնակչության կյանքի, կենցաղի ու կուլտուրայի ուսումնասիրության տեսակետից:

Նյութական կուլտուրայի և արվեստի պատմությանը Հ. Օրբելու նվիրած աշխատությունները աչքի են ընկնում կարևոր եզրահանգումներով և ուսումնասիրության վերլուծական մեթոդով: Դեռևս Անիի ընձևած նյութերի հիման վրա Ն. Մառը և Հ. Օրբելին արեցին մի շարք կարևոր եզրակացություններ: Անիին, լինելով Բաղրատունիների մայրաքաղաքը, միայն հայկական կյանքը ու կուլտուրան չէ, որ արտահայտում է, նա արտացոլում է նաև հարևան երկրների քաղաքային կյանքի, մշակույթի մի շարք կողմերը, Արևելքի ժողովուրդների տնտեսական, քաղաքական ու մշակութային կապերը, ուստի նա օգնում է բացահայտելու Մերձավոր Արևելքի միջնադարյան քաղաքի պատմության կյանքի և մշակույթի բազմազան հարցերը: Անիի պեղումները ցույց տվեցին, թե որքան սխալ էր ժողովուրդների մշակույթների միջև սահմանափակ գիծ անցկացնելը՝ սոսկ ըստ ազգային և դավանաբանական հատկանիշների, անտեսելով՝ սոցիալ-դասակարգային հատկանիշների ու հանգամանքների դերը: Դեռևս 1910-ական թթ. արվող այս եզրակացությունները առանձին գիտական արժեք ունեին արևելագիտության համար: Մշակութային երևույթները սոցիալ-պատմական լայն հիմքի վրա և ընդարձակ կապակցությունների մեջ քննարկելու կուլտուր-պատմական վերլուծության մեթոդը դրվեց Հ. Օրբելու ուսումնասիրությունների հիմքում:

Մյուս մեթոդը, որն այնքան փայփայել և իրենց աշակերտներին ներշնչել են Ն. Մառը և Հ. Օրբելին, դա ուսումնասիրվող հարցը կամ երևույթը հնարավոր բոլոր աղբյուրների, այն է՝ նյութական մշակույթի, գրավոր հիշատակարանների, լեզվի, ժողովրդական բանահյուսության և ազգագրության ընձևած տվյալների ամբողջության լույսի տակ բազմակողմանիորեն քննարկելու մեթոդն է:

Այս երկու մեթոդների լայն կիրառումով խոշոր չափով պայմանավորվել են Հ. Օրբելու ինչպես գիտական հետաքրքրությունները, նույնպես և նրա աշխատությունների բազմակողմանիությունը, գիտական հարցերի նրա ընդգրկման ընդարձակությունն ու խորությունը:

Անիին վերաբերող աշխատություններից բացի, Հ. Օրբելին Հայաստանի նյութական կուլտուրայի պատմությանը նվիրել է բազմաթիվ այլ հոդվածներ և աշխատություններ: Գաշունի խեֆրիտյա մի դաստակ՝ հայերեն մակադրությամբ, Անիի զարդամոտիվներով մի զանգ, Խաչենի խաչքարերը՝ կենցաղային բարձրաքանդակներով, Արևելյան Հայաստանի, թե Կիլիկիայի արձանաթանի կամ չրամանների, Անրերդի բաղնիքում գտնված խեղկատակի կմախքը արագադի ոսկորը կողքին՝ անշուշտ հնագիտական արվեստագիտական նշանակություն ունեցող իրեր են և կարելի է խոսնեցնել՝ դրանց, բայց թե ո՞րչափ պերճախոս են նրանք Հ. Օրբելու գրչի տակ, ինչպես են պատմում հայ ժողովրդի անցյալի ժառանգության, արվեստի, արհեստների, բնակչության կյանքի ու կենցաղի, հարևան, նույնիսկ հեռավոր ժողովուրդների հետ եղած մշակութային և այլ կապերի մասին՝ կարելի է վարձանալ:

Գիտական խոշոր արժեք են ներկայացնում Հ. Օրբելու աշխատությունները, նվիրված Մերձավոր Արևելքի, Իրանի, սելջուկների մշակույթի և արվեստի պատմությանը: Կան աշխատություններ, որոնք վերաբերում են առանձին հուշարձանների, ինչպես մուսուլմանական շքաղյուսներին, սասանյան արծաթե թասերին, և այլն, որոնք շարադրված են կուլտուր-պատմական լայն ֆոնի վրա և նոր խոսք են ասում քննարկվող հարցերի վերաբերյալ:

Մերձավոր Արևելքի, մասնավորապես Իրանի մշակույթի և արվեստի պատմությանը նվիրված թվով 15 աշխատություններից «Մուսուլմանական արվեստը», «Սասանյան արվեստը», «Սասանյան մետաղը» (գրված պրոֆ. Կ. Վ. Տրեերի հետ միասին) և «Սասանյան ու վաղ իսլամական մետաղագործությունը» (գետնդրված Իրանի արվեստին և հնագիտությանը նվիրված 7-հատորյա միջազգային հրատարակության I և IV հատորներում), աչքի ընկնող նորույթ հանդիսացան արևելագիտության մեջ: Այդ աշխատությունները բացահայտում են Մերձավոր Արևելքի, մասնավորապես Իրանի մշակույթի դարգացման հիմնական ուղիներն ու դժերը, վեր հանում մշակույթի բազմաթիվ հուշարձանների բուն էությունը, նրանց ծնունդ տվող միջավայրը:

իր հասարակական հարաբերութիւններով, դադարախոսութեամբ ու ավանդութիւններով: Հ. Օրբելին մտցրեց նաև մի շարք փաստական ու ժամանակագրական շտկումներ սասանյան արվեստի պատմութեան մէջ:

Հ. Օրբելու հնագիտական-արվեստագիտական բնույթի անտիպ աշխատութիւնների թվում բացառիկ տեղ է գրավում «Աղթամարի տաճարը և նրա բարձրաքանդակները» ընդարձակ մենագրութիւնը (շուրջ 20 մամուլ), որի մէջ քննարկվում են կուլտուր-պատմական բազմաթիվ հարցեր, հանրագումարի են բերվում հեղինակի դիտողութիւններն ու եզրակացութիւնները, դիտական ուսումնասիրութեան նրա վերլուծական մեթոդը: Հ. Օրբելին գիտնականների դործը դիւրացնելու նպատակով կազմել է երկու ինքնատիպ աշխատութիւն՝ «Հիջրային պատմական տարեթվերը եվրոպական օրացույցի վերածելու ժամանակագրական աղյուսակներ» դիրքը, որը տպագրված է և «Հայկական պատմական տարեթվերը եվրոպական օրացույցի վերածելու ժամանակագրական աղյուսակներ» դիրքը, որը մնում է անտիպ: Դրանց համար հեղինակը մշակել է լողարիթմական աղյուսակներին նմանվող մի ձև, որով արարական և հայկական տարեթվերը վերածվում են եվրոպական օրացույցի թվականներին և վերջիններս՝ արարականի ու հայկականի:

Արեւելքի կուլտուրայի պատմարան Հ. Օրբելին հանդես եկավ արեւելագիտութեան մէջ տեղ գտած մի քանի հակադիտական տեսակետների դեմ: Նա խիստ քննադատութեան ենթարկեց արտասահմանյան արեւելագետների շրջաններում տարածված «պանիրանիզմը», որը Առաջավոր Ասիայի մշակութային զարգացման արժատները տեսնում էր իրանական մշակույթի մէջ կամ բացատրում էր նրա ազդեցութեամբ: Մշակույթի առաջացման, զարգացման և փոխակերպութիւնների անընդհատ բարդացող պատմական պրոցեսը անտեսվում էր և փոխարինվում ազդեցութիւնների փոխառութիւնների տեսութեամբ:

1931 թ. իր մի հոդվածում, 1934 թ. Ֆիրդուսու ծննդյան 1000-ամյակի կապակցութեամբ և մանավանդ 1935 թ. Իրանագետների միջազգային կոնգրեսում (որը գումարված էր Լենինգրադում), Օրբելին ծանրակշիռ և սուր քննադատութեան ենթարկեց դասակարգայնորեն տարբեր երկու մշակութիւնների անտեսումը Արեւելքում և նրանց փոխարինումը «քրիստոնեական» և «մուսուլմանական», «պանիրանական», «պանիսլամական», «սելջուկյան» մշակութիւնների հակադիտական հասկացութիւններով:

* * *

Սկսած IV դարից մեզ հասել են հայերեն վիճական արձանագրութիւններ, որոնք հետադաշում ավելի ու ավելի մեծ թիվ են կազմում, իսկ X—XIII և հետագա դարերի արձանագրութիւնները՝ փորագրված ճարտարապետական շէնքերի, խաչքարերի և մահարձանների վրա այնքան շատ են, որ դժվար է նույնիսկ հաշվառման ենթարկել: Շինարարական, նվիրատվական, հարկային, տնտեսական, հիշատակագրական և այլ բնույթի այդ արձանագրութիւնները հայ ժողովրդի ու նրա կերտած մշակույթի պատմութեան անհնահատելի աղբյուր են: Բնական է, որ այդ արձանագրութիւնները դրավեցին հայագետների ուշադրութիւնը ավելի քան հարյուր տարի սրանից առաջ, սակայն մինչև XX դարի սկզբները հայերեն արձանագրութիւնների հավաքման ու հրատարակութեան դործը մնում էր նախնական վիճակում և չէր կարող բավարարել ժամանակակից դիտութեան պահանջները: Անհրաժեշտ էր մշակել հայերեն արձանագրութիւնների հավաքման, վերծանման և հրատարակման դիտական հիմունքները: Խիստ կարևոր այդ խնդրի իրականացման պատիվը պատկանում է Հ. Օրբելին:

Արձանագրութիւնների հավաքման, վերծանման, մեկնաբանութիւնների և ծանոթագրութիւնների սկզբունքները Հ. Օրբելին մշակեց դեռևս 1913—1914 թթ. հայերեն արձանագրութիւնները հավաքելու և մի շարք արձանագրութիւններ հրատարակելու հետ համընթաց: Այնուհետև նա մտահոգված էր արձանագրութիւնների ժողովածուի (կորպուս) հրատարակութեան հարցով: Պետք էր գտնել այդ մեծ և ծանր գործը դիւրին և հնարավոր դարձնելու եղանակ այն տարիներին, երբ գրչանկար ընդօրինակութիւններից մեծ թիվով կլիշեներ պատրաստելը խիստ դժվար էր, և նա մշակում է հայկական արձանագրական հատուկ տառանիշներ, որոնցով 1914 թ. հրատարակվում են Մարմաշենի արձանագրութիւնները, իսկ հետագայում՝ շարվում Լենինի ու շրջակայքի արձանագրութիւնների պրակները, որոնց հրատարակումը դժբախտաբար խափանվեց 1924 թ. և լույս կտեսնեն այս տարի՝ մեր Ակադեմիայի հրատարակութեամբ:

³ И. Орбели, О классовых корнях традиций исторической науки (Сообщения ГАИМК, 1931, № 1).

Դրանից առաջ նա հրատարակել էր հայերեն արձանագրություններին նվիրված 9 աշխատություն: Դրանք արձանագրությունների վերծանման, նրանց բովանդակության վերլուծման հնագրական առանձնահատկությունների որոշման և հանդիպող տերմինների մեկնաբանման փայլուն օրինակներ են հանդիսանում: Այդ ամենի հետ միասին նրանք ունեն բանասիրական և լեզվաբանական խոշոր արժեք:

Անիի և նրա շրջակայքի, ինչպես և Դանձասարի ու այլ վայրերի արձանագրությունները Հ. Օրբելին մտադիր էր հրատարակել շորս պրակով:

Նյութական կուլտուրայի և արվեստի պատմության, ինչպես և հայ էպիգրաֆիկային վերաբերող աշխատություններում Հ. Օրբելին հաճախ անդրադարձել է գրականության, ժողովրդական բանահյուսության և բանասիրության հարցերին: Բայց նա ունի նաև բուն այդ բնագավառին վերաբերող աշխատություններ, որոնց թիվը անցնում է քսանից:

Հ. Օրբելուն առանձնապես զբաղվում ու ոգևորում էին Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի ժողովուրդների գրական ստեղծագործության խոշորագույն քերթվածքները՝ հանճարեղ Ֆիրդուսու խորախորհուրդ և վեհ «Շահնամեն», Ռուսթավելու անզուգական «Վազրենավորը», հայ ժողովրդի իմաստուն ու սրամիտ առակները և այլ հուշարձաններ:

1934 թ. նշվում է Ֆիրդուսու 1000-ամյա հոբելյանը: Հ. Օրբելին մեկնում է Թեհրան, ուր հանդես է գալիս զեկուցումով, բարձր գնահատականի արժանացնելով սովետական իրանագիտությունը: Հոբելյանի առթիվ նա կազմակերպում է գիտական աշխատությունների ժողովածուի հրատարակությունը, խմբագրում է այն և գրում առաջաբանը: 1937 թ. Օրբելու ղեխավորությամբ Պետական էրմիտաժում կազմակերպվում է հանճարեղ Պուշկինի մահվան 100-ամյակին նվիրված ցուցահանդես: Այդ հոբելյանի կապակցությամբ Հ. Օրբելին գրում է «Պուշկինը ու վրաց գրականությունը» արժեքավոր հոդվածը: Քիչ հետո նա խմբագրում է «Վիսոռմիանի» XII դ. վրացական վեպի և «Վիս ու Ռամին» X դ. պարսկական պոեմի ռուսերեն թարգմանությունը, կցելով նրան իր առաջաբանը: 1938 թ. նշվում է Ռուսթավելու 750-ամյա հոբելյանը: Հ. Օրբելին ղեխավորում է այդ հոբելյանին նվիրված «Ռուսթավելու ժամանակաշրջանի հուշարձաններ» գիտական ժողովածուի կազմելու աշխատանքները, որի միտքը ինքն էր հղացել, գրում է ութ հոդված, խմբագրում է ժողովածուն և հրատարակում նույն թվականին, իր առաջաբանով և ներածականով: Իր հոդվածներում ու զեկուցումներում Հ. Օրբելին արեւելագիտական լայն ֆոնի վրա գնահատում է Ռուսթավելու անմահ «Վազրենավորի» խոշոր մշակութային և անզուգական զեղարվեստական արժեքը, խմբագրում է պոեմի բնագրի ռուսերեն թարգմանությունը:

Բացառիկ տեղ են զբաղում Հ. Օրբելու աշխատանքները, կապված «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպի 1000-ամյա հոբելյանի հետ: 1939 թ. նշված այդ հոբելյանը դարձավ հայ ժողովրդի մշակույթի տոնը, որին թափ ու շուք էր հաղորդում Հ. Օրբելու ղեկավար աշխատանքը: Հ. Օրբելին խմբագրում է հայ ժողովրդի անմահ դյուցազնավեպի հայերեն և ռուսերեն համահավաք տեքստերը, կազմակերպում է ֆրանսիացի հրատարակությունը, ղեխավորում է պոսի ժամանակաշրջանին նվիրված ցուցահանդեսի կազմակերպումը՝ Հայաստանի Պետական պատմական թանգարանում, ղեկավարում մեծ հանդիսավորությամբ տեղի ունեցող հոբելյանական նիստերը, հանդես գալիս զեկուցումներով Սրեանում, Մոսկվայում, Լենինգրադում: Հ. Օրբելին ուսումնասիրում և վերլուծում է հայ ժողովրդի համահավաք հանճարի այս մեծագույն ստեղծագործությունը, ցույց է տալիս նրա առաջնակարգ տեղը համաշխարհային վիպասանության դանձարանում:

1939 թ. «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպի հայերեն և ռուսերեն համահավաք բնագրերը լույս տեսան: Հ. Օրբելու ընդարձակ առաջաբանով, որը մնում է վեպի վերաբերյալ երբևէ զրկված լավագույն ընդհանրացնող աշխատություններից մեկը: Հ. Օրբելին գրեց հոդվածներ նաև դանդան ամսագրերի համար, իսկ հետագայում իր ուսումնասիրությունները հանրագումարի բերեց ժայկական հերոսական էպոսը աշխատության մեջ, որը հայերեն և ռուսերեն առանձին գրքերով լույս տեսավ 1956 թ.:

Քննության առարկա դարձնելով հայկական էպոսի և նրա կերպարների առաջացման ու ձևավորման հարցերը, Օրբելին արել է շատ կարևոր և հիմնավոր եզրակացություններ: Նա ցույց է տվել, որ օտար և ներքին հարստահարողների դեմ հայ ժողովրդի դարավոր պայքարը ընդհանրացնող վեպի միջուկը նրա երրորդ պատումն է, որը վերաբերում է Սասունցի Դավիթին, իսկ մյուս պատումները աճել են այդ միջուկի շուրջը, ինչպես սրանչևի մարգարիտն է գոյանում ծովային խեցու մեջ ընկած փոքրիկ ավազահատիկի շուրջը: Վեպի առանցքը կազմել է արարիվաճողների դեմ սասունցիների դուրս գալու և նրանց ջախջախելու մասնակի իրողությունը: Երին հարաբարդվել են հայրենիքի անկախության և ժողովրդի ազատության համար մղվող պայ-

քարի բազմադարյան եղելությունները, վերամշակվելով և անցնելով ժողովրդի աղատատենչ իղձերի բովով: Կերտվել է այդ պայքարի հերոսի դուցազնական կերպարը, որին վերադրել են այն բոլոր հատկանիշները, բնավորության այն բոլոր գծերը, որ այդ ժամանակ ունեցել է երգեր հյուսող և եղելություններ վիպող հայ ժողովուրդը:

Հ. Օրբելին կրթոտ քննադատության ենթարկեց հայկական էպոսի ֆեոդալական ծագման տեսությունը և վեր հանեց նրա խոր ժողովրդայնությունը, որը վեպի մեջ դրսևորվում է ամեն բանում և ամենից առաջ հայրենասիրության և անկախության վերաբերյալ ժողովրդական ըմբռնումների, ամեն տեսակի բռնակալության դեմ պայքարելու զաղափարախոսության մեջ, աշխատանքի և խաղաղության վրա խարսխված ու սոցիալական կեղեքումից ազատ արդար կարգերի, արդարացի ու ճշմարտացի բարքերի վերաբերյալ երազանքի մեջ: Ինչպես էպոսի հերոսները, նույնպես և նրանց աշխարհայացքը անխզելիորեն կապված են ժողովրդի հետ ու նրան են պատկանում:

Հայկական ժողովրդական վեպը համեմատելով Արևելքի և Արևմուտքի շատ ժողովուրդների վեպերի հետ՝ Հ. Օրբելին բացահայտում է նրանց մեջ եղած թե՛ ընդհանրությունները, և թե՛ առանձնահատկությունները: Մերժելով արևմտյան գիտնականների միտումը, որով ամեն ինչ բխեցվում էր միջերկրածովյան ավազանից և բացատրվում պարզ փոխառություններով, հեղինակը առասպելների ու հնամենի պատկերացումների հարցը դիտում է ավելի շրջահայաց ու բազմակողմանի: Մշակութային ընդհանրությունները հետևանք են հասարակության տնտեսության, կյանքի ու մտածողության զարգացման մեջ գոյություն ունեցող ընդհանրությունների: Իսկ առանձնահատկությունները հետևանք են հասարակության տարբեր հատվածների, և տարբեր ժողովուրդների կյանքի ու մտածողության զարգացման ընթացքում գոյացած ինքնությունների, մարդկանց առասպելական ու այլ պատկերացումների զարգացման ու ճեղքումների մեջ դարերի ընթացքում և տարբեր վայրերում գոյացած տարբերությունների: Փոխառությունները և փոխադրեցությունները, իհարկե, դեր խաղացել են և այդ դերը չպետք է ժխտվի:

Հ. Օրբելին իր ուսուցիչ Ն. Մառի նման մեծ ուշադրություն է նվիրել հայկական միջնադարյան առակներին: Նա սիրում էր այդ առակները և հաճախ օգտագործում՝ իր բանավոր և գրավոր խոսքում: Այդ առակներին նա նվիրել է երեք հատուկ աշխատություն: Դրանցից առաջինը տպվել է Ռուսթավելու ժամանակաշրջանի հուշարձաններին նվիրված ժողովածուում «Ռուսթավելու հերոսները և նրանց հպատակները» խորագրի տակ: Այստեղ վերլուծվում է տիրող կարգերի հանդեպ ժողովրդական զանդվածների դժգոհությունն ու բողոքը, նրանց ինքնագիտակցության աճը, կապված քաղաքների ու քաղաքային կյանքի զարգացման հետ՝ XII—XIII դդ.:

Երկրորդ աշխատությունը միջնադարյան հայկական առակների մի ժողովածու է, որը լույս տեսավ ուսերեն Հ. Օրբելու սքանչելի, պարզապես անգերազանցելի թարգմանությամբ և ընդարձակ ուսումնասիրությամբ: Բացատրելով իր ուսումնասիրության նպատակը, նա ասում է, թե իր գրքի խնդիրը տեսնում է այն բանում, «որպեսզի ընթերցող ոչ մասնագետին իսկ մատչելի ձևով պատկերացում տրվի, թե ինչպես և ինչ բանում Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակները կարող են օգնել ճիշտ հասկանալու միջնադարյան Հայաստանի (այլև ամբողջ Կովկասի) պատմությունը և XII—XIII դդ. իրադրությունը»: Հեղինակը Մ. Աբեղյանի պես ընդգծում է առակների նշանակությունը միջնադարյան Հայաստանի սոցիալական կյանքի առավել մութ կողմերը լուսաբանելու տեսակետից. մանավանդ որ մյուս աղբյուրները լուրջում են պահպանում այդ հարցերի վերաբերյալ:

Հ. Օրբելին ուսումնասիրել է մոկաց բարբառը, հավաքել է բանահյուսական նյութեր այդ բարբառով: Նա կազմել է Մոկաց բարբառի բառարան: Հ. Օրբելին ունի նաև քրդագիտական արժեքավոր աշխատություններ: Նա ուսումնասիրել է մասնավորապես Մոկսի քրդական բարբառը, բանահյուսական նյութեր հավաքել այդ բարբառով: Նա կազմել է քրդերեն-ուսերեն և ուսերեն-քրդերեն բառարաններ:

Հ. Օրբելու գիտական գործունեության և նրա աշխատությունների համառոտ տեսությունից պարզ երևում է, թե որպիսի լայն ընդգրկման, մեծ գիտելիքների տեր, բազմակողմանի ու խոսքի տեսական էր նա: Նրա աշխատությունները մարգարիտներ են Կովկասի և Արևելքի հնամենի մշակույթի պատմության մատենաշարում:

Հ. Օրբելին արժանի համբավ էր վայելում Սովետական Միության մեջ և նրա սահմաններից դուրս: Նա արժանացել է մեծ պատիվների: ՍՍՌ Միության Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ էր 1924 թ., իսկական անդամ՝ 1935 թ. Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ՝ 1943 թ., Խեհրանի համալսարանի պատվավոր պրոֆեսոր՝ 1935 թ.:

Հնագետների լոնդոնյան ընկերության պատվավոր անդամ՝ 1944 թ., Իրանի Գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ՝ 1945 թ.:

Իր գիտական և գիտա-կազմակերպական գործունեությանը Հ. Օրբելին զուգակցում էր նաև հասարակական գործչի իր խոշոր ձիրքերը: Հայրենական պատերազմի տարիներին նա իր ամբողջ եռանդն ու ավյունը ի սպաս զրեց Սովետական Հայրենիքի պաշտպանության վեհ գործին, վտանգի ենթարկելով իր կյանքն իսկ: Նա ակտիվ հասարակական աշխատող էր Հենինգրագում գերմանա-ֆաշիստական շրջապատման ծանր ամիսներին: 1942 թ. օգոստոսի 29-ին հնչեցին Կովկասի պաշտպաններին ուղղված նրա կրակոտ խոսքերը Անդրկովկասի ժողովուրդների ներկայացուցիչների Քրիլիսիում գումարված հակաֆաշիստական միտինգում. 1946 թ. փետրվարին նա պատկանաք ազգող վկա էր գերմանաֆաշիստական զլխավոր հանցագործներին դատող Նյուրնբերգյան դատարանում:

Բարձր գնահատելով Հ. Օրբելու ծառայությունները սովետական երկրի գիտության և մշակույթի բնագավառում, Սովետական կառավարությունը նրան պարգևատրել է մի շարք շքանշաններով, որոնց թվում և Հենինի երկու շքանշանով:

Ականավոր գիտնականը թողել է գրական մեծ ժառանգություն, որը չորս մեծածավալ հատորներով հրատարակվելու է ՍՍՌԿ Գիտությունների ակադեմիայի կողմից: Հայկական ՍՍԻ Գիտությունների ակադեմիան այս տարի Հովսեփ Օրբելու ծննդյան 75-ամյակի տարելիցին հրատարակելու է նրա ընտիր աշխատությունների ծավալուն հատորը և Անիի արձանագրությունների ժողովածուն: Ականավոր գիտնականի աշխատությունների հրատարակությունները կլինեն նրա հիշատակի հավերժացման լավագույն կոթողները:

ВЫДАЮЩИЙСЯ УЧЕНЫЙ И ГРАЖДАНИН

(К 75-летию со дня рождения акад. И. А. Орбели)

Проф. Б. Н. АРАКЕЛЯН

(Р е з ю м е)

Плодотворная научная и научно-организаторская деятельность выдающегося советского ученого академика Иосифа Абгаровича Орбели охватывает более чем полувековой период. Особенно широко она развернулась в Государственном Эрмитаже, а также в Академии наук Армянской ССР, первым президентом которой он был.

Число научных трудов И. А. Орбели, отличающихся широким охватом научных проблем, многогранностью и яркостью, доходит до 80. Их можно разделить на три основные группы. В первую группу входят работы, посвященные вопросам археологии и истории искусства Армении, Грузии, Ирана и всего Переднего Востока. Во вторую группу входят труды по армянской эпиграфике, научные основы которой были разработаны им же. В третьей группе можно объединить работы, относящиеся к литературе, филологии, армянскому эпосу Давид Сасунский и фольклору.

Труды И. А. Орбели отличаются разносторонностью анализа рассматриваемых проблем с возможно полным привлечением данных из письменных, археологических, этнографических и фольклорных источников. Памятники культуры Иосифом Абгаровичем рассматривались в их исторической взаимосвязи, и не только в рамках истории создавшего их народа, но и тех народов, которые веками были его соседями. Он был подлинным интернационалистом в науке, ему дороги были памятники культуры всех народов. Особую любовь И. А. Орбели питал к памятникам культуры народов Кавказа и Ирана. Величественный «Шахнаме» Фирдоуси, глубоко народный и бессмертный эпос «Давид Сасунский», изумительная по содержанию и звучанию поэма Руставели «Витязь в тигровой шкуре», армянские средневековые басни, отражающие чаяния народа и его мудрость,— все это в равной мере увлекало Иосифа Абгаровича.

Глубокие по научному анализу, яркие по мастерству слога, разносторонние по охвату, труды крупного арменоведа, кавказоведа и востоковеда Иосифа Абгаровича Орбели составляют ценный вклад в сокровищницу советской науки.